

# Մ աշտոցի Արձագանգ

Հայաստանեայց Եկեղեցւոյ Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցի ամսաթերթ  
WWW.SOURPHAGOP.ORG (19-րդ տարի)

## Այս թիւով.....

Նոյեմբեր 2019 (ԻԷ տարի թիւ 3)

Նոյեմբեր ամսուան բացատրական  
բառարան Էջ 2-7

Տօն՝ Սուրբ Առաքեալներու  
Անդրեասի եւ Փիլիպպոսի  
Ամենայն Սրբոց  
Յիսնակ  
Սուրբ Գրիգոր Սքանչելագործ  
Սուրբ Նիկողայոս Զմիւռնացի  
Սուրբ Յովիանէ եւ Վասիլունիի  
Սուրբ Հրեշտակապետերու  
Գաբրիէլի եւ Միքայէլի  
Տօն՝ Սուրբ Առաքեալներու  
Թադէոսի եւ Բարթողոմէոսի  
Հ ա յ ա ս տ ա ն ի ա ո ա ջ ի ն  
լուսաւորիչները  
Տօն Ընծայման Ս. Աստուածածնի

Եկեղեցական Բառարան Էջ 8  
Բացատրութիւն՝ Հայց. Առաք. Սուրբ  
Եկեղեցւոյ Պատարագին Էջ 9-11  
Որն է ճիշդ պատասխանը Էջ 12-15

Լուրեր Կիրակնօրեայէն  
Սրբոց Թարգմանչաց Էջ 16



Խաչքարի Հեղինակ՝ Ժողովրդական  
Վարպետ, Ռուբեն Նալբանդյան  
**Հ... Հրեշտակ**

Ամսուան Համարները  
«Արդ, ով որ իր անձը այս մանուկին պէս կը խոնարհեցնէ՝ անհկա է մեծը երկինքի արքայութեան մեջ»: *Մատթէոս 18.4*  
«Զգո՛ւ յշ, մի արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մեջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս»: *Մատթէոս 18.10*

## Նոյեմբեր ամսուան բացատրական տօնացոյց

Շբթ. 2	Տօն Ամենայն Սրբոց, Հնոց եւ Նորոց, Յայտից եւ Անյայտից
Շբթ. 9	Տօն՝ Սուրբ Հրեշտակապետերու Գաբրիէլի եւ Միքայէլի
Շբթ. 16	Տօն՝ Սուրբ Առաքեալներու Անդրէասի եւ Փիլիպպոսի
Կիր. 17	Բարեկենդան Յիսնակի Պահոց
Բշ. 18	Ա. օր Յիսնակի Պահոց
Դշ. 21	Սբ. Կոյսի Տաճար Ընծայում
Շբթ. 23	Սբ. Գրիգորի եւ Նիկողայոսի
Բշ. 25	Սբ. Կուսանաց Յուլիանէի եւ Վասիլուհիի
Բշ. 30	Սբ. Առաքեալներ եւ մեր առաջին լուսաւորիչներ Թադէոս եւ Բարթողիմէոս

Պահքի Օրեր: 1, 3, 8, 10, 15, 17, 20, 21, 22, 23, 24, 29,



Ամաթերտամ  
քաղաքի  
զինանշանը

### Տօն՝ Սուրբ Առաքեալներու Անդրէասի եւ Փիլիպպոսի

Անդրէաս առաքեալը եղբայրն էր Պետրոս առաքեալի, որ իրեն պէս ձկնորս էր: Սկիզբը, Անդրէասը աշակերտած է Ս. Յովհաննէս Մկրտիչին եւ Յիսուսը գտնելէ ետք, անմիջապէս իր եղբայրը Պետրոսը գտած ու ըսած է անոր. «Մեսիան գտանք» (Յովհ. 1.35-42): Ըստ աւանդութեան, Ս. Անդրէաս առաքեալ կը քարոզէ Յունաստանի եւ փոքր Ասիոյ մէջ եւ կը նահատակուի X ձեռով խաչի մահով, Յունաստանի մէջ:

Փիլիպպոս առաքեալը Բեթսայիդայէն էր, Անդրէասի եւ Պետրոսի քաղաքէն: Յիսուս էր որ երբ Գալիլիա գացած ատեն Փիլիպպոսը տեսաւ, անոր ըսաւ. «Հետեւէ՛ ինձի»: Անդրէասն ալ իր կարգին գտաւ Բարթողիմէոսը «Նաթանայէլը» եւ զայն Յիսուսի ներկայացուց (Յովհ. 1.43-51): Ըստ աւանդութեան կը նահատակուի Եփեսոսի մէջ խաչի մահով:

Հայաստանեայց Եկեղեցին Ս. Անդրէասի եւ Ս. Փիլիպպոսի յիշատակը կը տօնէ Խաչի 9-րդ Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:

### Տօն՝ Ամենայն Սրբոց (բոլոր սուրբերուն՝ հիներուն եւ նորերուն, յայտնիներուն եւ անյայտներուն)

Հայ Եկեղեցին այս տօնով կը նշէ բոլոր այն սուրբերուն յիշատակը, որոնց անունները չեն անցած Տօնացոյցի կամ եկեղեցական օրացոյցի մէջ, սակայն անոնց սուրբ անունները գրուած են Երկնքի արքայութեան սրբազան մատեանին մէջ:

Քրիստոնէական հալածանքներու եւ հաւատքի համար մղուած բազմաթիւ պատերազմներու ժամանակ շատեր նահատակուած են: Անոնց անունները, ցաւօք, չեն պահպանուած եւ չեն հասած մեզի: Ուստի, եկեղեցին հաստատած է այս նուիրական տօնը անոնց յիշատակը ոգեկոչելու համար: Անձեր, որոնք իրենց թանկ արիւնը հեղեցին յանուն Քրիստոսի և անոր խորհրդաւոր մարմնին՝ եկեղեցւոյ շինութեան համար:

Այս տարի կը տօնենք Շաբաթ՝ Նոյեմբերի 2-ին:

## Յիսնակ

Յիսնակը, 50 օրերու միջոց մըն է, որուն ընթացքին կը պատրաստուինք տօնելու Յիսուսի ծնունդն ու աստուածայայտնութիւնը, որ տեղի կ'ունենայ Յունուար 6-ին: Յունուար 6-էն 50 օրեր դէպի ետ հաշուելով կը հասնինք Նոյեմբեր 18-ին, հետեւաբար այդ թուականին ամենէն մօտ Կիրակին Յիսնակի Բարեկենդանն է:

Կար ժամանակ, երբ Յիսնակի ամբողջ տետողութեան պահք կը պահուէր, Ս. Յարութեան նախորդող մեծ պահքին պէս: Սակայն ներկայիս սովորական Չորեքշաբթիի եւ Ուրբաթի պահքերէն զատ երեք շաբաթներու վերածուած է Յիսնակի Պահքը: Առաջին շաբաթը Յիսնակի Պահք, Դեկտեմբերին՝ Ս. Յակոբի պահք, իսկ Յունուարին՝ Ս. Ծննդեան պահք:

## Սուրբ Գրիգոր Սքանչելագործ

Ս. Գրիգոր Սքանչելագործ ծնած է Պոնտոսի (Սեբաստիա) Նեոկեսարիա քաղաքին, ազնուական ընտանիքի մը մէջ, շուրջ 210թ.: Գրիգոր մտադիր էր հմտանալ օրէնսգիտութեան և հռետորութեան մէջ, սակայն Աստուած անոր եւ իր եղբօր համար այլ ճանապարհ նախասահմանած էր: Անոնք ուսում ստացան Աթէնքի մէջ, ապա Պաղեստինեան Կեսարիա քաղաքին մէջ, աշակերտելով այն ժամանակուայ ամենահեղինակաւոր քրիստոնէայ մտաւորականին՝ Որոզինեսին: Նեոկեսարիա վերադառնալով՝ Գրիգոր կը ձեռնադրուի քաղաքի եպիսկոպոս: Աւանդութեան համաձայն, Ս. Գրիգորի եպիսկոպոս ձեռնադրուելու օրերուն Նեոկեսարիոյ մէջ հագիւ 17 քրիստոնէայ կար, իսկ մահուան օրերուն՝ ընդամենը 17 հեթանոս: Իր անուան հետ կապուած բազմաթիւ հրաշքներու համար արժանացած է «Սքանչելագործ» մակդիրին:

Ս. Գրիգոր աչալրջութեամբ կատարեց թէ՛ իրեն վստահուած թեմս ու ժողովուրդը և թէ՛ եղաւ մեծ մատենագիր՝ թողելով բազմաթիւ աստուածաբանական երկեր:

Ան վախճանած է 270 թ. իսաղաղ մահուամբ: Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Գրիգոր Սքանչելագործի, Նիկողայոս Հայրապետի և Միւռոն եպիսկոպոսի յիշատակը կը տօնէ Ս. Խաչի Ժ. Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը:



## Սուրբ Նիկողայոս Զմիւռնացի՝ սքանչելագործ հայրապետը

Ս. Նիկողայոս Հայրապետը ծնած է Փոքր Ասիոյ Լիկիա գաւառի Բաթարա քաղաքին մէջ (ներկայիս Անթալիայի մօտիկ): Փոքր հասակէն կորսնցուցած է մեծահարուստ եւ բարեպաշտ ծնողքը եւ մեծցած է իր մօրեղբօր՝ Նիկողայոս Երեց եպիսկոպոսի խնամքին ներքեւ: Աւետարանական պատգամը «Ինչ որ ունիս՝ ծախէ եւ աղքատներուն տուր» (հմմտ. Մտթ. 19.21), իր կեանքի նշանաբանը կը դարձնէ՝ իր խնամքը տարածելով աղքատներուն, հիւանդներուն, բանտարկեալներուն եւ որբերուն վրայ: Ժողովուրդի կամքով կը դառնայ Զմիւռնիոյ եպիսկոպոսը: Հալածանքներու ընթացքին կ'աքսորուի, սակայն չի դադրիր ամենուրեք Աւետարանը քարոզելէ: Խաղաղութիւն վերահաստատուելուն պէս կը վերադառնայ իր աթոռը, կը մասնակցի 325 թ. Նիկիոյ

Տիեզերական ժողովին: Կը մահանայ 326թ.: Ընդհանրական Եկեղեցւոյ ամենասիրուած սուրբերէն է՝ առաւելաբար յայտնի Santa Claus անունով:





Հրեշտակներու քանդակներ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցւոյ ճակատին



Հրեշտակի բարձրաքանդակը Աղթամար վանքի Ս. Խաչ եկեղեցւոյ ճակատին



«Հրեշտակը եւ Ս. Մարիամը» 1330-ի Կիրակոս Աղբակեցիի «Աւետում» մանրանկարը

### Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի կոյսերու յիշատակութեան օր

Յուլիանէ եւ Վասիլուհի անունով շատ կոյսեր կան Տօնացոյցերու մէջ: Բայց հայկական Տօնացոյցին մէջ յիշատակուողները Նիկումիդիա քաղաքէն են: Ս. Յուլիանէն (†304) մանուկ հասակէն ինքզինք նուիրած է կուսական կեանքին: Դիոկղետիանոս կայսեր հալածանքներու օրերուն մերժած է հեթանոս երիտասարդի մը ամուսնութեան առաջարկը եւ տարուած է դատարան: Երբ բազմաթիւ չարչարանքներէ եւ փորձութիւններէ յետոյ սրբուհին կը հանեն այրելու, խարոյկն ինքն իրեն կը մարի: Մա առիթ կը դառնայ բազմաթիւ ներկաներու դարձին, որոնք նոյն տեղ կը նահատակուին: Իսկ Ս. Յուլիանէն կը գլխատուի 19 տարեկանին:

Հայ Առաքելական Եկեղեցին Ս. Յուլիանէ եւ Վասիլուհի կոյսերու յիշատակը կը սօնէ Յիսնակի Կիրակիին յաջորդող երկուշաբթի օրը:

Ս. Վասիլուհին եւս († 303), որ իննամեայ աղջնակ էր, Դիոկղետիանոս կայսեր հալածանքներու օրերուն կը մատնուի տանջանքներու, սակայն անժսաս դուրս կու գայ փորձութիւններէն առիթ դառնալով իր դատաւորի դարձին:

## Սուրբ Հրեշտակապետերու Գաբրիելի եւ Միքայելի Եւ Ողջ Երկնային Զօրքի Յիշատակութեան Օր



Միքայել հրեշտակապետը Բսրայելի ժողովուրդին համար մարտնչելու ընթացքին: Երուսաղէմ, ձեռ. 2027, էջ 4բ, Աստուածաշունչ 1266 թ. Կիլիկիա, ծաղկող Թորոս Ռոսլին

Նոյեմբեր ամսուան առաջին կամ երկրորդ Շաբաթ օրը, Հայց. Եկեղեցին կը յիշատակէ հրեշտակապետեր Գաբրիելի եւ Միքայելի տօնը: Հրեշտակ կը նշանակէ պատգամաւոր, առաքեալ՝ «ղրկուած»: Նախապէս անոր կը տրուէր երկնային դեսպան, պատգամաւոր, եւ կամ սուրհանդակ նշանակութիւնը: Աստուածաշունչը կը վկայէ որ հրեշտակները իբրեւ լուսեղէն՝ ստեղծուած են առաջին օրը, լոյսի հետ միասին: Անոնք ժամանակի ներգործութենէն չեն ազդուիր եւ սեռային յատկանիշներ չունին:

Հայ եկեղեցւոյ հրեշտակաբանութեան համաձայն՝ հրեշտակները անմարմին հոգիներ են. ըմբռնելի, ինքնիշխան, միշտ շարժման մէջ եղող եւ անսեռ: Անոնք անմահ սպասաւորներ են: Ըստ եկեղեցւոյ Սուրբ հայրերուն՝ հրեշտակները իբրեւ լուսեղէն էակներ, ստեղծուած են արարչագործութեան առաջին օրը՝ լոյսի հետ միասին: Աստուծոյ հրահանգով, անոնք կոչուած են սպասաւորելու

մարդ արարածին: Հետեւաբար, անոնք ծառայող հոգիներ են, որոնք երկնաբնակ ըլլալով հանդերձ, իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ երկրաւոր կեանքի ընթացքին: Անոնք կ'աշխատին ժամանակի եւ տարածքի մէջ, մարդու հետ եւ մարդու համար:

Հրեշտակներուն կը կոչեն նաեւ Աստուծոյ պատգամաւորներ, որոնք կ'իրականացնեն Տիրոջ կամքը: Սուրբ Գիրքը կը վկայէ որ անոնք անհամար են: Ըստ Ս. Դիոնիսիոս Արիսպագացիի՝ անոնք ունին ինը դաս՝ Աթոռներ, Քերովբէներ, Սերովբէներ, Տերութիւններ, Զօրութիւններ, Իշխանութիւններ, Պետութիւններ, Հրեշտակապետեր եւ Հրեշտակներ:

Աստուածաշունչին մէջ հրեշտակներու մասին ակնարկութիւնները շատ են: Անոնք կը ներկայացունեն իբրեւ բազմաթիւ, մեծագործ եւ զօրաւոր էակներ: Հին Կտակարանին մէջ անոնք Աստուծոյ ներկայացուցիչները կը նկատուին, միջնորդներ հոգեւոր եւ նիւթեղէն աշխարհներուն միջեւ: Անոնք ունին իրենց ղեկավարները որոնցմէ ամենէն աւելի ծանօթ են Գաբրիելը եւ Միքայելը: Հին միջնադարեան մանրանկարչութեան մէջ յատկապէս, կը գտնենք Գաբրիել հրեշտակապետի պատկերը, Տիրամօր աւետելու ատեն:

Գաբրիել անունը, որ կը նշանակէ «Աստուծոյ այր», բարձրեալի անմիջական պաշտօնեան է, որուն վերապահուած է Տիրոջ վերին խորհուրդները տարածելու շնորհը: Այս հրեշտակապետն էր, որ ուղղարկուած էր Տիրոջ կողմէ Ս. Կոյս Մարիամին, հաղորդելու բարի լուրը՝ իսկ Զաքարիային՝ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծննդեան աւետիսը:

Միքայել անունը, որ կը նշանակէ «Ո՞վ է Աստուծոյ նման», երկնաւոր Արքայի փառքի եւ անոր ժողովուրդին պաշտպանութեան համար մարտնչողն է. ան՝ որուն տրուած է կառավարելու եւ թագաւորելու շնորհ: Միքայել հրեշտակապետի անունը, չորս անգամ վկայակոչուած է Ս. Գրքին մէջ: (Դան. 10.13, 12.1, Յուդ. 1.9, Յայտ. 12.7):

**Տօն Սուրբ Առաքեալներու Թաղէնսի եւ Բարթողոմէոսի**

Հայաստանի մէջ Քրիստոսի անետարանին քարոզութիւնը առաջին անգամ մուտք գործեց Ս. Թաղէնս առաքեալի միջոցաւ: Աստուածաշունչին մէջ ան նաեւ կը կոչուի Ղեբէնս եւ Յուդա: Յիսուսի Համբարձումէն ետք Ս. Թաղէնս եկաւ Եդեսիա եւ ծանր հիւանդութենէն բժշկեց Աբգար թագաւորը: Ան մեր երկիրը բերաւ նաեւ Ս. Գեղարդը որ գործածուած էր Յիսուսի կողմ խոցելու խաչափայտին վրայ: Աբգարի նամակով Ս. Թաղէնս եկաւ Արտազ գաւառը՝ Մանատրուկ թագաւորին մօտ եւ դարձի բերաւ թագաւորն ու Մանդուխտ կոչար: Մակայն, Աբգարի մահէն ետք Մանատրուկ ուրացաւ իր հաւատքը եւ ծանր հալածանքներ սկսաւ քրիստոնէաներուն դէմ: Նախ նահատակուեցաւ թագաւորին դուստրը, ապա նաեւ Ս. Թաղէնս առաքեալը 46 թուին: Ս. Թաղէի վանքը ներկայիս կը գտնուի Իրանի մէջ:

Բարթողոմէոս Առաքեալ կը կոչուի նաեւ Նաթանայել: Ան Հնդկաստանէն վերադարձին Գողթան գաւառէն սկսաւ իր քարոզութիւնը Հայաստանի մէջ: Ըստ աւանդութեան, ան Հայաստան բերաւ Տիրամօր սրբապատկերը եւ Անահիտ դիցուհիի մեհեանին տեղ կառուցեց Ս. Աստուածածին եկեղեցին, ինչպէս նաեւ կուսանոց: Ըստ աւանդութեան Ս. Թաղէնս եւ Ս. Բարթողոմէոս առաքեալները իրարու կը հանդիպին Արտաշատի կամուրջին վրայ:





## Հայաստանի առաջին լուսաւորիչները

Յիսուս իր յարութենէն ետք իր աշակերտներուն պատուիրեց երթալ աշխարհի չորս կողմերը եւ քարոզել աւետարանը: Առաքեալները, Յիսուսի պատուէրին համաձայն ցրուեցան աշխարհի բոլոր կողմերը ու իրենց քարոզչութեամբ քրիստոնէայ եկեղեցիներ սկսան հաստատել:



Յիսուսի տասներկու առաքեալներէն երկուքը՝ Թադէոսը եւ Բարթողիմէոսը, եկան Հայաստան եւ հոն տարածելով Աւետարանի ճշմարտութեան լոյսը, Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցին հաստատեցին: Աստուածաշունչին մէջ, Թադէոս Առաքեալ կը յիշուի նաեւ Ղերէոս անուան տակ: Ան Հայաստան այցելած ու հոն քրիստոնէութիւն քարոզած առաջին առաքեալն է (43-66 թ.): Անոր գործունէութեան գլխաւոր կեդրոնը կը նկատուի Վասպուրական նահանգի Արտազ գաւառը, ուր կը գտնուէր Սանատրուկ թագաւորի պալատը: Ըստ Մովսէս Խորենացիի, Թադէոս Առաքեալ, Եդեսիոյ Աբգար թագաւորը բժշկելէ, եւ քրիստոնէութիւն քարոզելէ ետք, Աբգարի հրովարտակով կը ներկայանայ Հայոց Սանատրուկ թագաւորին: Սանատրուկ թագաւորը, նախ կ'ընդունի քրիստոնէութիւնը, սակայն զգուշանալով

իր իշխաններուն սպանալիքներէն, ետ կը դառնայ իր նախկին կրօնքին: Հակառակ ասոր, ժողովուրդէն շատեր, որոնց մէջը ըլլալով իր դուստրը Սանդուխտը՝ կ'ընդունին քրիստոնէութիւնը: Շատ չանցած, Սանատրուկի կարգադրութեամբ, Արտազ գաւառի Շաւարշաւան գիւղաքաղաքին մէջ կը նահատակուին Թադէոս առաքեալը եւ Սանդուխտը:



Առաքեալի նահատակութեան վայրին մէջ (ներկայիս Իրան) կառուցուած է Ս. Թադէ վանքը: Հայ եկեղեցին տարին երկու անգամ կը յիշատակէ Ս. Թադէոսը: Մէկ անգամ Բարթողիմէոս Առաքեալի հետ, Յիսնակի առաջին Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը (Նոյեմբերի վերջը կամ Դեկտեմբերի սկիզբը): Իսկ երկրորդ անգամ Ս. Սանդուխտ Կոյսի հետ: Թադէոս առաքեալ իր հետ Հայաստան բերած է այն գեղարդը որու միջոցաւ խոցուած էր խաչուած քրիստոսի կողը:

Յովհաննէսի Աւետարանին մէջ, Բարթողիմէոս առաքեալ կը յիշատակուի Նաթանայէլ անուան տակ: Յիսուս , վկայելով անոր մասին, կ'ըսէ. «Ահաւասիկ ճշմարիտ Իսրայէլացի մը, որուն մէջ նենգութիւն չկայ» (Յովհ. 1.47): Սուրբ Բարթողիմէոս իր քարոզչութեան ճամբով հասաւ Հայաստան եւ քարոզեց մօտաւորապէս 8 տարիներ (60-68թ): Ան իր քարոզութիւնը սկսաւ

Միւնեաց նահանգէն: Անոր քարոզութեան գլխաւոր վայրերէն մէկն էր Գողթն գաւառը, ուր առաքեալի ձեռքով կառուցուած է Տեառնընդառաջ եկեղեցին: Առաքեալը անցաւ նաեւ Արտաշատ քաղաքը ուր հանդիպեցաւ Թադէոս Առաքեալին: Հայաստանեայց եկեղեցին այս երկու առաքեալներուն յիշատակը կը տօնէ Յիսնակի առաջին Կիրակիին յաջորդող Շաբաթ օրը: Նկարներուն մէջ, ան կ'երեւի դաշոյնով (որով նահատակուած է) եւ Տիրամօր պատկերը ձեռքին (որ ըստ աւանդութեան իր հետ Հայաստան բերած է եւ զետեղուած է Անձեւացեաց գաւառի Հոգեաց վանքին մէջ): Բարթողիմէոս Առաքեալի անունով վանք մը գոյութիւն ունի Վասպուրականի Աղբակ գաւառին մէջ, ուր թաղուած է:

## Տօն Ընծայման Ս. Աստուածածնի


Մարիամ դուստրն էր Յովակիմի եւ Աննայի: Աւանդութենէն քաղելով պատմութիւնը, գիտենք որ Աննա ամուլ էր եւ Մարիամ ուխտի զաւակն էր անոնց:

Համաձայն այս ուխտին, երբ Մարիամ երեք տարեկան եղաւ, ծնողքը զայն ընծայեց տաճարին, որպէսզի հոն նուիրեալ այրիներու եւ կոյսերու խնամքին եւ հոգատարութեան ներքեւ՝ Աստուածային պաշտամունքով մեծնայ եւ տաճարին ծառայէ:

Այս ընծայման տօնն է որ մեր օրացոյցին մէջ արձանագրուած է «Տօն Ընծայման Ս. Աստուածածնի երից ամաց ի տաճարն»:

Աստուածամօր երեք տարեկանին տաճար ընծայման տօնը, անփոփոխ կերպով կը կատարուի 21 Նոյեմբերին:

ԱՌԻՆՁի Ս. Աստուածածին Եկեղեցին 2000թ



## Եկեղեցական Բառարան


**Ա ա Արեղայ** Ասորական ծագում ունեցող այս բառը կը նշանակէ առանձին ապրող՝ չամուսնացած: Մեր եկեղեցիէն ներս Արեղայ կը կոչուին կուսակրօն քահանաները: Տարբերութիւնը ամուսնացեալ քահանային եւ արեղային միջեւ հետեւեալն է՝ ձեռնադրութեան օրը, երեկոյեան ժամերգութեան ընթացքին, արեղան յատուկ ուխտ կը կատարէ կուսակրօն ժապու եւ չամուսնանալու: Ատոր փոխարէն ան կը խոստանայ ամբողջութեամբ նուիրուիլ հոգևոր ծառայութեան:

**Արել** եւ Կայէն Դրախտէն վտարուելէ ետք Ադամն ու Եւան ունեցան երկու որդի: Մեծին կոչեցին Կայէն իսկ փոքրին Արել: Եղբայրները իրենց ծնողներու հետ սկսան կրել օրուայ հացը վաստակելու ծանրութիւնը: Կայէնը կը զբաղուէր հողագործութեամբ, իսկ Արելը հովիւ էր: Հայրական տան մէջ հաստատուած օրէնքի համաձայն՝ անգամ մը Կայէնը Աստուծոյ նուէր մատուցանեց իր մշակած հողի առաջին բերքէն՝ երախայրիքը. իսկ Արելը զոհաբերեց իր հօտին առաջին ծնածներէն: Տէրը սակայն կը ճանչնար անոնց սիրտերը, գիտէր որ Արելը իր գառնուկներէն ամենալաւերը ընտրեց մինչդեռ Կայէնը բերքի լաւագոյն մասը պահեց իրեն: Այս պատաճառով Աստուած ընդունեց Արելի զոհաբերութիւնը եւ տուաւ իր բարեհաճութեան նշանը իսկ Կայէնի նուէրին Ան չնայեցաւ: Եւ Կայէնը նախանձէն ու չարութենէն մղուած սպաննեց Արելը: Աշխարհի մէջ կատարուած առաջին սպաննութիւնն էր այդ: Աստուած անիծեց մարդասպանը եւ Կայէնը իր ողջ կեանքի ընթացքին հանգստութիւն եւ ապահովութիւն չգտաւ:



**Բացատրություն՝ Հայց. Առաք. Սուրբ Եկեղեցւոյ Պատարագին «շար. 1»**

Վերջերս երբ կը մտածէի Ս. Պատարագի բացատրութեան ներկայացում մը ընել մեր Կիրակնօրեայ Դպրոցի երկրորդականի աշակերտներուն, յիշեցի գրադարանիս մէջ ունեցած եւ ժամանակին մեծ հաճոյքով կարդացած Բերիոյ Թեմի տարիներու Բարեջան Առաջնորդ, եւ մեր Ս. Յակոբ Եկեղեցւոյ այժմու Հոգևոր Տեսուչ՝ Գերշ. Տ. Սուրեն Ս. Արք. Գաթարոյեանի «Բացատրություն Ս. պատարագի» բաժինը 1998ի Հալէպի մէջ հրատարակուած Ս. Պատարագ Հայց. Առք. Եկեղեցւոյ գրքոյկը: Հետեւաբար որպէս հիմ ունենալով այդ գրութիւնը, այս եւ յաջորդող մի քանի թիւերուն մէջ պիտի ներկայացնեմ հոն տրուած բացատրութիւնը, միշտ ի մտի ունենալով յատկապէս մեր դպրոցի երկրորդականի աշակերտները: Թորոս Պապիկեան



**Պատարագի խորհուրդին հաստատումը**

Հայց, Եկեղեցւոյ եօթը խորհուրդներէն մէկն է սուրբ հաղորդութիւնը որ կը տրուի սուրբ պատարագին ընդմէջէն:

Ան ոգեկոչուեմ է վերջին ընթրիքի յիշատակին, ուր Յիսուս ինքզինք մատուցեց առաքեալներուն՝ ըսելով ըստ Յովհաննէս անտարանիչին թէ՛ «Ան որ չուտէ իմ մարմնէս եւ չիմէ իմ արիւնէս՝ չի կրնար յաւիտենական կեանք ժառանգել» Յովհաննու 6.53

Յիսուս իր մարմինն ու արիւնը որպէս փրկութեան երաշխիք տուաւ մարդոց վերջին ընթրիքին, ուր ան հաստատեց մեղսաքաւիչ հաղորդութեան խորհուրդը: Սեղանէն առաւ հացը, օրհնեց, եւ աշակերտներուն տալով ըսաւ «առէ՛ք, կերէ՛ք, այս է մարմին իմ՝ որ վասն ձեր եւ բազմաց բաշխի ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»: Ապա գինիին բաժակը առաւ, օրհնեց, գոհացաւ, եւ աշակերտներուն տալով ըսաւ «Արբէ՛ք ի սմանէ ամենեքեան այս է արիւն իմ՝ նորոյ ուխտի, որ յաղաքս ձեր եւ բազմաց սեղանի, ի քաւութիւն եւ ի թողութիւն մեղաց»:

Աստուածորդին վերոյիշեալ բառերը արտասանելով յաւիտենական ուխտ մը կնքեց իր առաքեալներուն հետ, ուխտ մը որ պիտի իմաստաւորուէր իր խաչելութեան խորհուրդով եւ իր իսկ անձին պատարագումով: Քրիստոս աշխարհ եկած էր որպէս միջնորդ հաշտութեան՝ հօր Աստուծոյ եւ ադամական մեղքով այլասերած մարդկութեան միջեւ: Այս նուիրական առաքելութիւնը կ'իրագործուէր փրկագործութեան խորհուրդով: Յիսուս իր մարմինն ու արիւնը որպէս գրաւական կու տար մարդկութեան, ինչպէս Պօղոս առաքեալ հարազատօրէն մեկնաբանելով պիտի ըսէր.

«Միթե չէ՞ք գիտեր, որ ձեր մարմիններուն համար մասանաւոր զին վճարուած է, փառաւորեցէք զԱստուած ձեր մարմիններուն մէջ» Ա. Կորնթացիս 6.19

Ս. Պատարագի խորհուրդով՝ առաջին հերթին մենք կը յիշատակենք Աստուծոյ որդիին մարդեղութեան խորհուրդը. Քրիստոս մարդացաւ, որպէսզի մարդը վերստին բարձրանայ այն պատուանդանին, ուրկէ ինկած էր ան նախաձնողներու մեղանշումէն ետք: Այդ էր Աստուծոյ որդիին առաքելութիւնը եւ այդ առաքելութեան ամբողջացումը պիտի ըլլար, անոր փրկագործութեան խորհուրդը՝ Սուրբ Պատարագումը:

Պատարագը անարիւն զենու մէկ է Քրիստոսի, փրկագործութեան խորհուրդն է ան, որ կը կատարուի մեր մեղքերու բնաջնջման եւ մեր հոգիներու փրկութեան համար:



Խորհրդաւոր Ընթրիք

### Պատարագ՝ զոհ, ընծայ, նուէր

Սուրբ Պատարագի խորհուրդով Քրիստոս որպէս Աստուածային գերագանց սիրոյ արտայայտութիւն ինքզինք կ'ընծայէ, կը զոհուի մեր փրկութեան համար: Ճշմարտօրէն Ս. Պատարագը Աստուծոյ սերը ներկայացնող Աստուծոյ որդիին զոհաբերութեան խորհուրդն է ուր ամէն անգամ պատարագուող «Գառն Աստուծոյ» իր մարմինն ու արիւնը կու տայ մեղանշական բնութեամբ անկումի ենթակայ մարդուն, որպէս Աստուածային գերագանց սիրոյ արտայայտութիւն:

Ինչպէս վերջին ընթրիքի սեղանին վրայ հացն ու զինին Քրիստոսի օրհնութեամբ փոխակերպուեցան Փրկչին Մարմնոյն ու Արեան, նմանապէս ամէն Ս. Պատարագի խորհուրդին՝ Ս. Սեղան ընծայուող ՆՇԽԱՐՆ ու ԳԻՆԻ նուիրագործուելով ու սրբագործուելով գերահրաշօթէն կը փոխակերպուին եւ հաւատացեալներուն կ'ընծայուին որպէս մեղսաքաւիչ Ս. Հաղորդութիւն, որպէս Մարմին եւ Արիւն Քրիստոսի:

Յովհաննէս Ա. Մանդակունի (հաւանաբար 400-483/84 կամ 498/499), հայոց կաթողիկոս (ըստ որոշ աղբիւրներու՝ 471/472-483/84, ըստ ուրիշներու՝ 485-498/499), վարդապետ և հայրապետ, հետեւեալ բառերով կը ներկայացնէ Մեծ եւ Սքանչելի խորհուրդը հաւատացեալներուն:

«Այսուհետև որպէս լոկ հաց մի՛ նայիր անոր, եւ ոչ ալ որպէս գինի նկատի ունեցիր կամ ընդունիր զայն, որովհետև Ս. Խորհուրդին սահաւորութիւնը Թեպէտև անտեսանելի է, սակայն անոր զօրութիւնը իմանալի եւ զգալի:

Մենք ճշմարիտ հաւատքով Քրիստոսն է, որ կ'ընդունինք Ս. Սեղանին վրայ, Անոր է, որ կը մօտենանք, Չայն կը տեսնենք, կը շօշափենք, կը համբուրենք, կը ճաշակենք զայն ընդունելով մեր ներսիդին եւ կը դառնանք մարմինը, անդամներն ու որդիները Աստուծոյ»  
Ճառք, էջ 168:

Յաջորդի պիտի ներկայացնենք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Ս. Պատարագի արարողութիւնն ու անոր բացատրութիւնը:

Նախ ըսենք, որ Ս. Պատարագի արարողութիւնը 4 մասերէ կը բաղկանայ:

1. Պատրաստութիւն
2. Ճաշու Պաշտօն
3. Բուն Պատարագ
4. Արձակում



Գօտի  
ԺԸ դար, Կարս  
Ս. Էջմիածնի Գանձատուն



Սուրբ սեղանի խաչ  
Թ. դար սկիզբ, Ախալցխայ



Կանթեղներ  
Ս. Էջմիածնի գանձատուն



Կ ա թ ո ղ ի կ ո ս ի    ծ ի ս ա կ ա ն  
հանդերձանքը  
Ս. Էջմիածնի Մայր տաճարի  
թանգարան



### Ո՞րն է ճիշդ պատասխանը Մանկապարտեզի անկիւն



Ամէն մարդ կերաւ այնքան որ ուզեց: Եւ ինչ որ աւելցաւ, տասներկու կողով լեցուց:

Ամբողջացո՛ւր ըստ Ղուկասի Աւետարանին 9.14-17 .

հինգ, յիսունական, տասներկու, աչքերը, կշտացան, ձուկը, հացը, կատարեցին

Որովհետեւ շուրջ ----- հազար մարդ կար: Յիսուս  
աշակերտներուն ըսաւ.

- Նստեցուցէք զանոնք ----- հոգինոց խումբերով:

Անոնք ----- հրահանգը եւ նստեցուցին բոլորն ալ: Ապա  
Յիսուս առաւ հինգ ----- եւ երկու -----, ----- երկինք  
բարձրացուց, օրհնեց, կտրեց եւ աշակերտներուն տուաւ որ  
բաժնեն ժողովուրդին: Բոլորն ալ կերան ու -----, եւ  
աշակերտները աւելցած կտորները հաւաքելով՝  
----- սակառ լեցուցին:

Ո՞րն է ճիշդ պատասխանը

## Նախակրթարան Ա., Բ. եւ Գ. դասարաններու անկիւն

- 1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք Նոյեմբեր 2-ին:  
 ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան  
 Հայրապետին  
 բ. Ս. Գեորգին  
 գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոսին  
 դ. Բոլոր Սուրբերուն
- 2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Գաբրիէլ եւ Ս. Միքայէլ Հրեշտակապետերուն տօնը:  
 ա. Նոյեմբեր 5  
 բ. Նոյեմբեր 9  
 գ. Նոյեմբեր 7  
 դ. Նոյեմբեր 27
- 3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ Առաքեալներու Անդրէասի եւ Փիլիպպոսի տօնը:  
 ա. Նոյեմբեր 6  
 բ. Նոյեմբեր 18  
 գ. Նոյեմբեր 20  
 դ. Նոյեմբեր 16
- 4.- Ս. Կոյս Մարիամ քանի՞ տարեկանէն սկսեալ սկսաւ Տաճարին մէջ ապրիլ:  
 ա. 3  
 բ. 12  
 գ. 20  
 դ. 7
- 5.- Յիսնակը, քանի՞ օրերու միջոց մըն է:  
 ա. 6  
 բ. 13  
 գ. 50
- դ. 7
- 6.- Քանի՞ հատ են Քրիստոսի Սուրբ Եկեղեցոյ խորհուրդները:  
 ա. 1  
 բ. 3  
 գ. 7  
 դ. 12
- 7.- Ըսէ՛ մէկ բառով. ոսկի բերան ունեցող:  
 Ո-----ն
- 8.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:  
 Մ-----
- 9.- Գրէ՛ Հրեշտակապետին անունը:  
 Գ-----
- 10.- Ի՞նչ էր Պետրոս Առաքեալին եղբօրը անունը:  
 ա. Ս. Յովհաննէս Ոսկեբերան  
 Հայրապետ  
 բ. Ս. Փիլիպպոս  
 գ. Ս. Անդրէաս  
 դ. Ս. Գրիգոր

Ո՞րն է ճիշդ պատասխանը

Նախակրթարան Դ., Ե. եւ Զ. դասարաններու անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք Նոյեմբեր 16-ին:

- ա. Ս. Անդրէ Զօրավարին
- բ. Ս. Գեորգին
- գ. Ս. Անդրէաս եւ Ս. Փիլիպպոսին
- դ. Բոլոր Սուրբերուն

2.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Ս. Կոյսին Տաճար ընծայումը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Նոյեմբեր 13
- գ. Նոյեմբեր 21
- դ. Նոյեմբեր 27

3.- Այս տարի ե՞րբ կը տօնենք Սուրբ կուսանաց Յուլիանէի եւ Վասիլուհիի տօնը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Նոյեմբեր 22
- գ. Նոյեմբեր 20
- դ. Նոյեմբեր 25

4.- Այս տարի ե՞րբ է Յիսնակի պահոց բարեկենդանը:

- ա. Նոյեմբեր 6
- բ. Նոյեմբեր 17
- գ. Հոկտեմբեր 20
- դ. Հոկտեմբեր 30

5.- Յիսնակի Բարեկենդանը Նոյեմբերի ո՞ր օրուան ամենէն մօտ Կիրակիին կը հանդիպի:

- ա. 6
- բ. 16
- գ. 18
- դ. 31

6.- Ո՞ր հրեշտակապետին անունին իմաստը «Աստուծոյ այր» է:

- ա. Գաբրիէլ
- բ. Միքայէլ

7.- Ամբողջացո՞ւր հրեշտակներուն դասերը:

- Ք-----ներ,
- Ս-----ներ,
- Տ-----ներ

8.- Աստուածաշունչին մէջ ո՞ւր կը կարդանք:

«Զգո՞ւ՛յ՛, մի՛ արհամարհէք այս փոքրիկներէն մէկը. գիտցէք, որ անոնց հրեշտակները երկինքի մէջ միշտ կը տեսնեն իմ երկնաւոր Հայրս»:

Աւետարան ըստ Մ-----սի ---

9.- Յիսուս քանի՞ բորոտներ բժշկեց ըստ Ղուկասի 17.11-19-ին:

- ա. 5
- բ. 1
- գ. 12
- դ. 10

10.- Յիսուսի բժշկած բորոտներէն քանի՞ հոգի վերադարձան շնորհակալութիւն յայտնելու:

- ա. 5
- բ. 1
- գ. 12
- դ. 10



Ո՞րն է ճիշդ պատասխանը  
Երկրորդականի անկիւն

1.- Որո՞ւ տօնը այս տարի կը տօնենք  
Նոյեմբեր 21ին:

- ա. Ս. Կոյսի Տաճար ընծայումին
- բ. Ա. օր Յիսնակի Պահոց
- գ. Ս. Անդրեասի եւ Ս. Փիլիպպոսի
- դ. Բոլոր Սուրբերուն

2.- Յիսուսի ո՞ր Առաքեալը X ձեռով  
խաչի մահով մահացաւ:

- ա. Մատթէոս
- բ. Թադէոս
- գ. Բարթողիմէոս
- դ. Անդրեաս

3.- Ամբողջացո՛ւր Պօղոս Առաքեալի  
գրած նամակներուն ցանկը.:

- ա. Հռոմայեցիներուն
- բ. Ա. եւ Բ. Կ-----ցիներուն
- գ. Գ-----ցիներուն
- դ. Ե-----ցիներուն
- ե. Փ -----ցիներուն
- զ. Կ-----ցիներուն
- է. Ա. եւ Բ. Թ-----ցիներուն
- ը. Ա. եւ Բ. Տ-----սին
- թ. Տ-----սին
- ժ. Փ-----նին
- ժա. Ե-----ցիներուն

4.- Մեր Եկեղեցւոյ 7 խորհուրդներէն  
ո՞ր մէկը կը տրուի Ս. Պատարագին  
ընդմէջէն:

- ա. Մկրտութիւն
- բ. Դրոշմ
- գ. Ապաշխարութիւն
- դ. Հաղորդութիւն

5.- Յիսնակը մեզի ո՞ր տաղաւարին  
կը պատրաստէ:

6.- Հայկական տօնացոյցին մէջ  
յիշատակուող Ս. Յովիանէ եւ Ս.  
Վասիլուհի կոյսերը ո՞ր քաղաքէն են:

Ն-----իա

7.- Ս. Հաղորդութեան ընթացքին, Ս.  
Սեղան ընծայուող ո՞ր երկու նիւթերը  
կը փոխակերպուին Քրիստոսի  
Մարմնին ու Արեան:

----- ու -----

8.- Ո՞ր հրեշտակապետին անունին  
իմաստը «Աստուծոյ այր» է:

- ա. Գաբրիէլ
- բ. Միքայէլ

9.- Ամբողջացո՛ւր Ղուկաս 6.31-ի  
ոսկեղէն համարը:

Ինչ որ -----  
ձեզի ----- դուք ալ -----  
անոնց:

10.- Ո՞ր հրեշտակապետին անունին  
իմաստը «Ո վ է Աստուծոյ նման» է:

- ա. Գաբրիէլ
- բ. Միքայէլ

Լուրեր Կիրակնօրեային ՄՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

Կիրակի՝ 13 Հոկտեմբերին Սուրբ Յակոբ Կիրակնօրեայ Դպրոցը նշեց Սրբոց Թարգմանչաց տօնը: Ուսուցիչներ անդրադարձան տօնին մանրամասնություններուն, որոնք տեղ գրաւած էին «Մաշտոցի Արձագանգ»ի Հոկտեմբեր 2019-ի Թիւին մէջ, երգեցին «Որք Չարդարեցին», եւ օրուան Գիրքի Ցուցահանդէսին ընդմէջէն 1 գիրք զատելով, իրենց հետ տուն տարին կարդալու...: Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները ստրվեցան Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց խօսքերը թէ.

«Առանց մեսրոպեան ոճով մարդակերտումի, խախուտ են բոլոր կերտուածքները մեր ազգային կեանքին, ինչպէս խախուտ են աւագահիմն ու հողաշէն կառոյցները աշխարհի...»:

«Հայ Գիրքը միւռո՛ն է մեր ժողովուրդի զաւակներուն համար: Ան, որ Հայ Գիրք կը կարդայ, կը միւռոնուի հայութեամբ»:

